

2020թ. Մարտի 31-ին կայանալիք Արցախի Հանրապետության նախագահի ընտրությունների մասնակցող թեկնածուների

նախընտրական ծրագրերը

Նախագահի թեկնածու	Հատված նախընտրական ծրագրից՝ վերաբերող Արցախյան հակամարտությանը	Հատված նախընտրական ծրագրից՝ վերաբերող Արցախ-Հայաստան հարաբերություններին
<p>1. Բալայան Քրիստին Գրիգորի <i>(ինքնաառաջադրված)</i></p>	<p>Տարածքային խնդրի վերաբերյալ յուրաքանչյուր պետական պատմական որոշում պետք է ներկայացվի համազգային հանրաքվեի:</p> <p>Տարածաշրջանային գիտաժողովի շրջանակներում մեկ այլ, ոչ պակաս կարևոր խնդրի քննարկում Արցախի տարածաշրջանային կարգավիճակի մասին: Պետք է համայն ժողովրդով ևս մեկ անգամ հաստատել, որ Արցախը Հայաստանի մաս է հանդիսանում 1989թ. դեկտեմբերի 1-ից, և որ հանրապետության հռչակումը 1991թ.-ին և հաջորդող հանրաքվեն սոսկ ինչ-որ կերպ խորհրդային օրենսդրությանը համապատասխանելու, ինչպես նաև միջազգային հանրության բացասական վերաբերմունքից և հնարավոր միջամտությունից ապահովագրվելու ինչ-ինչ փորձեր էին և ոչ մի դեպքում չեն կարող համարվել Արցախի՝ Հայաստանի կազմից դուրս գալու ակտեր:</p>	
<p>2. Բալասանյան Վիտալի Միխայիլի</p>	<p>Արցախի Հանրապետության համար անընդունելի են դարաբաղա-աղբբեջանական հակամարտության</p>	<p>Վերահսկողական գործառույթներով օժտված Համահայկական ազգային պալատի հիմնում, որի</p>

<p>(«Արդարություն» կուսակցություն)</p>	<p>կարգավորման ներկայիս խեղված ձևաչափը և մոտեցումները: Անհրաժեշտ է Արցախի մասնակցությամբ մշակել կարգավորման նոր սկզբունքներ: Արցախի արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրն է Արցախի ժողովրդի համար անվտանգության երաշխիքների ապահովումը, այդ թվում Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը՝ որպես անվտանգության ապահովման ժամանակակից մեխանիզմ:</p> <p>Անհրաժեշտ է Արցախյան կարգավորման ռազմավարության մշակում, ինչն իր մեջ կներառի.</p> <ul style="list-style-type: none"> • Հայաստանի և ԱՀ միջև ռազմավարական դաշինքի ձևավորման մասին միջպետական պայմանագրի ստորագրում, • ձգտել տարածաշրջանների պետությունների միջև ուժի կիրառումը բացառող պայմանագրի ստորագրմանը (խաղաղության պայմանագիր), • նպաստել զինադադարի ռեժիմի պահպանմանը և ամբողջ տարածքում հակամարտ բոլոր կողմերից կրակի դադարեցմանն ուղղված գործունեության իրականացմանը, • Ղարաբաղյան հակամարտության հետ կապված՝ ՀՀ և ԱՀ լիազորությունների և պատասխանատվության ոլորտների հստակ սահմանում, 	<p>մեջ ընդգրկված կլինեն Արցախի, Հայաստանի և արտերկրում բնակվող մեր հայրենակիցները:</p>
--	--	--

		<ul style="list-style-type: none"> • հակադարաբաղյան քարոզչության չեզոքացում, միջազգային հանրությանը ԱՀ-ում ընթացող ժողովրդավարական և այլ գործընթացների մասին արդյունավետ իրազեկում: <p>Ակտիվ համագործակցություն միջազգային տարբեր կազմակերպությունների հետ, հնարավորության դեպքում դրանց անդամակցում:</p>	
3.	Ամիրյան Սերգեյ Վասիլիի (<i>ինքնաառաջադրված</i>)	Չկա անդրադարձ	Ընդունել ՀՀ գերակայությունը և երկու հայկական հանրապետությունների միջև կնքել համապարփակ պայմանագիր:
4.	Բաբայան Դավիթ Կլիմի (<i>Արցախի Պահպանողական կուսակցություն</i>)	<p>Անկախ, ազգային պետությունը մեր ժողովրդի ամենամեծ նվաճումն է, որը որևէ շահարկման և սակարկության առարկա չի կարող լինել:</p> <p>Չկա վերադարձ անցյալին՝ լինի դա կարգավիճակի, թե սահմանների առումով: Կարգավիճակի միակ փոփոխությունը կարող է լինել հետագայում միացյալ հայոց պետության անբաժան մաս կազմելը:</p>	Մեր բոլոր հաղթանակների հիքում ընկած է Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը և պետք է անել հնարավորը շարունակական ընդլայնման և ամրապնդման համար:
5.	Լալայան Բելա Լաերտի (<i>ինքնաառաջադրված</i>)	<p>Արցախի խնդրի լուծման բանալին Արցախում է՝ ժողովրդի ձեռքին:</p> <p>Միայն Ապահով Արցախը կարող է բանակցությունների սեղանի շուրջ գրավել արժանի տեղ՝ ծանրակշիռ խոսքով :</p>	<p>«Երկու պետություն՝ մեկ Հայրենիք» տեսլականը հայեցակարգ պետք է դառնա Հայաստանի և Արցախի համար:</p> <p>Հայաստանի հետ կնքել ռազմաքաղաքական համագործակցության պայմանագիր, որով կկարգավորվի բանակի սպառազինության, արդիականացման հարցը, սահմանի</p>

			պաշտպանության հարցը:
6.	<p>Հարությունյան Արայիկ Վլադիմիրի («Ազատ Հայրենիք-Քաղաքացիական միացյալ դաշինք»)</p>	<p>Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման գործընթացի ակտիվացում:</p> <p>Ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության խաղաղ և վերջնական կարգավորում, որը պետք է բխի Արցախի ժողովրդի անօտարելի իրավունքների և անվտանգության շահերից:</p> <p>Միջազգային սուբյեկտայնության աստիճանի բարձրացում, տարբեր երկրներում բարեկամական շրջանակների ձևավորում, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ակտիվացում, ցայսօր ձեռքբերված միջազգային կապերի ամրապնդում և գործնականացում:</p>	<p>Մայր Հայրենիքի և Սփյուռքի հետ նոր որակի հարաբերությունների կառուցում:</p>
7.	<p>Խանումյան Հայկ Ռուբենի («Ազգային վերածնունդ» կուսակցություն)</p>	<p>«Ազգային վերածնունդ» կուսակցությունը գտնում է, որ Ղարաբաղյան հակամարտության բանակցային լուծումն անհրատեսական է: Հակամարտող կողմերի դիրքորոշումներն այնքան անհամատեղելի են, որ գոյություն ունեցող ստատուս-քվոյի միակ իրական այլընտրանքը նոր պատերազմն է: Այնուամենայնիվ, մեր գլխավոր նպատակներից մեկը պետք է լինի բանակցային լիարժեք ձևաչափի վերականգնումը՝ Արցախի բանակցությունների սեղանի շուրջ վերադառնալու տեսքով: Սա զգալիորեն կբարձրացնի Արցախի սուբյեկտայնությունը և թույլ կտա օգտագործել նաև այս խողովակը մեր ռազմավարական նպատակներին հասնելու համար:</p>	<p>Մենք ջանք չենք խնայելու շարունակել ՀՀ-ի հետ ինտեգրացիայի խորացումը: Արցախը կարող է լինել միայն Հայաստանի Հանրապետության մաս: Որևէ միտք, որը ենթադրում է Արցախի պատկանելիություն կամ մանդատային ենթակայություն այլ երկրի, կամ միջազգային կազմակերպության մեզ համար անընդունելի և դատապարտելի է:</p>

		<p>«Ազգային վերածնունդ» կուսակցությունը նպատակ է դնելու կանխել հնարավոր պատերազմը բանակի և տնտեսության շարունակական հզորացմամբ: ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ ստեղծվելու է ռազմաարդյունաբերական համալիր՝ խթանելով փամփուշտների, արկերի ու հրթիռների արտադրությամբ զբաղվող գործարանների առաջացմանը:</p> <p>Մեր առաջնային նպատակներից է լինելու ազատագրված շրջաններում ենթակառուցվածքների վերականգնումը և լայնածավալ վերաբնակեցման ռազմավարության մշակումն ու իրականացումը: Ընտրություններում հաղթելու դեպքում «Ազգային վերածնունդ» կուսակցությունը խորհրդարանական դիվանագիտության միջոցով ակտիվացնելու է Արցախի շահերն արտերկրում ներկայացնելու և պաշտպանելու ջանքերը: Արցախի հետ բարեկամության խորհրդարանական խմբեր ունեցող երկրների թիվը կտրուկ աճելու է:</p> <p>Արցախի ապագան հակամարտության կոնտեքստում մենք տեսնում ենք առվազն ներկայիս տարածքով և շատ ավելի մեծաքանակ բնակչությամբ: «Ազգային վերածնունդ» կուսակցությունն իշխանության գալու դեպքում՝ մեր ազգային շահերին համապատասխանող նոր իրողություններ է ստեղծելու հակամարտության գոտում և ստիպելու է միջազգային հանրությանը համակերպվել այդ իրողությունների հետ:</p>	
--	--	---	--

<p>8.</p>	<p>Իշխանյան Դավիթ Ռուբենի (ՀՅ Դաշնակցություն)</p>	<p>ԱՀ արտաքին քաղաքականության հիմնական նպատակն Արցախի հիմնահարցի, որպես Հայ Դատի բաղկացուցիչ մասի, լիարժեք լուծումն է խաղաղ ճանապարհով՝ Արցախում անցկացված համաժողովրդական հանրաքվեների և Մահմանադրության հիման վրա, միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում: Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը միացյալ հայրենիք կերտելու միջանկյալ հանգրվան է:</p> <p>«Զարգանալ՝ չզիջելով» սկզբունքը Դաշնակցության համար Արցախի հզորացման և հարցի լուծման հիմնական առանցքն է:</p> <p>Այդ նպատակով անհրաժեշտ է՝</p> <ul style="list-style-type: none"> — պետության նախաձեռնությամբ, համահայկական մակարդակով մշակել և ընդունել Արցախի խնդրի կարգավորման միասնական հայեցակարգ, որտեղ կհստակեցվեն հայկական կողմի հիմնական մոտեցումներն ու տեւականը, — մշակել և ընդունել արտաքին քաղաքականության հայեցակարգ, — համախմբել հայրենիքի և Սփյուռքի ներուժն Արցախյան հարցի լուծման գործընթացում, -ԱՀ անվտանգության և միջազգային ճանաչման ասպարեզում առավել կենսունակ դարձնել պետության հետ ՀՅԴ Հայ Դատի գրասենյակների և հանձնախմբերի համագործակցությունը, — բարեկամ երկրների հետ նպատակաուղղված աշխատանքներ ծավալել՝ ընդլայնելով այդ պետություններում ԱՀ դիվանագիտական մարմինների 	<p>Արցախը հայ ժողովրդի միասնության գաղափարական և առարկայական առանցքն է: ԱՀ-ն, ելնելով համայն հայության ամբողջականության գաղափարի գիտակցումից, ազգային շահերը ներկայացնողի իր յուրահատուկ գործոնով կարևոր դերակատարություն ունի հայության համախմբման և հայապահպանման գործում:</p> <p>Արցախ-Հայաստան-Սփյուռք բազմակողմանի կապերի ամրապնդումն ու զարգացումը պետք է հիմնված լինեն փոխշահավետ գործակցության վրա, որ ենթադրում է հետևյալ մոտեցումները՝</p> <ul style="list-style-type: none"> — հայ ժողովրդի տարբեր հատվածների միջև համազգային փոխըմբռնման, փոխվստահության, միասնության և համախմբվածության մթնոլորտի ապահովում, — համահայկական քաղաքական, տնտեսական, մշակութային, կրթական խորհրդածոլովների, համաժողովների, հավաքների, ինչպես նաև այլ բնույթի միջոցառումների կազմակերպում ԱՀ-ում, իսկ ՀՀ-ում և արտերկրում անցկացվող նման միջոցառումներին՝ Արցախի մասնակցության ապահովում, — ԱՀ, ՀՀ և Սփյուռքի միջև երկարաժամկետ համագործակցության ծրագրերի մշակում և իրականացում, — համահայկական տեղեկատվական դաշտի ձևավորում և բազմակողմանի համագործակցության ծավալում, — Սփյուռքի ներուժի, այդ թվում՝ գիտական,
-----------	--	---	--

		<p>ներկայությունը, — Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ ՀՀ) շարունակի լինել ԱՀ անկախության և անվտանգության երաշխավորը, — ՀՀ և ԱՀ միջև կնքել ռազմաքաղաքական համագործակցության պայմանագիր, — բանակցային գործընթացում ԱՀ-ն պետք է մասնակցի որպես լիիրավ բանակցող կողմ:</p> <p>ԱՀ տարածքային ամբողջականությունը տարածաշրջանի կայունությունն ու խաղաղությունը երաշխավորող հիմնական գործոններից է: ԱՀ իշխանությունները պետք է՝ — ամուր կեցվածք ունենան երկրի տարածքային ամբողջականության պահպանման և վերականգնման գործընթացում, — չեզոքացնեն հակաարցախյան քարոզչությունը և միջազգային հանրությանն ընկալելի դարձնեն ԱՀ-ում ընթացող ժողովրդավարական գործընթացները:</p>	<p>մասնագիտական և ֆինանսական մասնակցության ապահովում ԱՀ սոցիալ-տնտեսական հիմնահարցերի լուծման գործում:</p>
<p>9.</p>	<p>Բաղասյան Վահան Միքայելի <i>(«Միացյալ Հայաստան» կուսակցություն)</i></p>	<ul style="list-style-type: none"> • Դադարեցնել կեղծանկախության բեմականացումը և աստիճանաբար վերացնել Հայաստանի Հանրապետությունից ձևական ու ապօրինի անջատվածության բոլոր դրսևորումները: • Անհապաղ վերականգնել արցախաբնակ ՀՀ քաղաքացիների ընտրական, մյուս սահմանադրական իրավունքները և ազատությունները: • Անհապաղ դադարեցնել «երկուպետությունների» 	<p>Միավորում Հայաստանին՝ տես կողքի սյունակում:</p>

		<p>մասին տասնամյակների կեղծ քարոզչությունը և վերացնել դրա հետևանքները:</p> <ul style="list-style-type: none">• Մահմանադրությունը համապատասխանեցնել Արցախի՝ Հայաստանի հետ վերամիավորման մասին 1989թ. դեկտեմբերի 1-ի պատմական որոշմանը և ՀՀ անկախության հռչակագրին: Մասնավորապես ամրագրել, որ. <ol style="list-style-type: none">1. Արցախը յուրահատուկ կառավարման համակարգով օժտված կազմավորում է Հայաստանի Հանրապետության կազմում, իսկ Արցախի բնակիչները օժտված են ՀՀ քաղաքացու բոլոր իրավունքներով:2. Արցախի տեղական օրենսդիր մարմինը հրաժարվում է «Ազգային ժողով» անունից, իսկ նրա ընդունած օրենքները չպետք է հակասեն ՀՀ համապետական օրենսդրությանը:3. Արցախի գործադիր ղեկավարին առաջադրում է ՀՀ նախագահը կամ վարչապետը և ներկայացնում է Արցախի խորհրդարանի հաստատմանը:4. Արցախին երկամբողջ տարածքը Հայաստանի Հանրապետության տարածքի բաղկացուցիչ մասն է, որը կարող է ավելացվել հայկական այլ շրջանների	
--	--	---	--

		<p>ազատագրման դեպքում:</p> <p>Վերացնել Արցախում Հայաստանին զուգահեռ գործող կարգավորող բոլոր հանձնաժողովների առանձին գործունեությունը՝ դրանց իրավասությունները փոխանցելով ՀՀ համապետական մարմիններին, մասնավորապես և առաջնահերթորեն հասնել Արցախի հեռախոսային ցանցի ներառմանը համահայաստանյան ցանցում և բացառել ռուսիների կիրառությունը Հայաստանի հատվածների միջև:</p>	
10.	<p>Մայիլյան Մասիս Մամվելի («Մայիլյան - Նոր Արցախ» դաշինք)</p>	<p>«Տարածքներ՝ խաղաղության դիմաց: Տարածքներ՝ կարգավիճակի դիմաց»: Ո՛չ ու ո՛չ:</p> <p>Երկու հարցերն էլ՝ կարգավիճակ և խաղաղություն, համարվում են ինքնաբավ և չպետք է առաջարկվեն հայկական կողմերին՝ որպես սակարկության առարկա:</p> <p>Արցախի անվտանգության երաշխավորող ներկայիս մեր ունեցած կովաններն անձեռնպելի են և ենթակա չեն սակարկության:</p>	<p>Անկախացել ենք բոլորից: Ո՛չ:</p> <p>Արցախի Հանրապետության հռչակումը 1991թ սեպտեմբերի 2-ին և դեկտեմբերի 10-ի հանրաքվեն չեն ենթադրել Արցախի անկախությունը Հայաստանից:</p> <p>Արցախյան առաջին պատերազմի ժամանակ և հրադադարին հաջորդած տարիների ընթացքում առկա էր լայն հանրային համոզմունք, որ միջազգային հանրությանն ավելի ընկալելի լինելու և միջազգային իրավունքի տեսանկյունից առավել շահեկան դիրքերից ներկայանալու համար նպաստավոր է երկու հայկական պետությունների հայեցակարգի որդեգրումը: Որոշակի աշխատանքներ կատարվել են այս ուղղությամբ, ինքս էլ իմ ուժերի ներածին չափ ձգտել եմ մեր երկրի ու ժողովրդի համար առավելագույնը քաղել այդ մարտավարությունից, արձանագրվել են մի</p>

			<p>շարք ձեռքբերումներ: Արցախի Հանրապետության փաստացի անկախության միջազգային ճանաչումը ամեննին չի հակասում «Միացում»-ի գաղափարին, այլ նպատակ ունի միջազգայնորեն ճանաչելու Արցախի ինքնիշխան իրավունքը՝ տնօրինելու իր ապագան, ինչը ճանապարհ կհարթի դեպի համայն հայության վերջնանպատակի՝ «Միացում»-ի գաղափարի լիակատար իրականացում:</p> <p>Վերջին տարիներին, հատկապես՝ 2016թ ապրիլյան պատերազմից հետո, «Միացում»-ի գաղափարը որպես արցախյան շարժման միակ նպատակը, կրկին արդիական է դարձել և պահանջում է համազգային ջանքերի կենտրոնացում՝ հստակեցնելու այն ամբողջացած և վերջնականապես ամրագրված իրողություն դարձնելու ուղիները: Խորապես համոզված եմ, որ «Միացումը» ոչ միայն արցախահայության ամենանվիրական իղձն է, այլև ողջ հայության քաղաքական անվերափոխելի կամքը: Այժմ՝ որպես Արցախի հայության առջև պետական կառավարման պատասխանատվություն հանձն առնող գործիչ, ես վճռականություն եմ հայտնում ձեռնարկել անհրաժեշտ քայլերը՝ մեր միահամուռ և անշրջելի կամքին հասնելու ուղղությամբ, որոնցից առաջնային եմ համարում երկու հայկական պետությունների ինտեգրացիայի խորացումը:</p>
11.	<p>Ղուլյան Աշոտ Վլադիմիրի (Արցախի Ժողովրդավարական</p>	<p><i>Ադրբեջանա-դարաբադյան հակամարտության կարգավորումը հնարավոր է բացառապես միջազգային միջնորդության մանդատ ունեցող ԵԱՀԿ Մինսկի խմբի</i></p>	<p>Հետամուտ ենք լինելու Հայաստան-Սփյուռք-Արցախ փոխգործակցության համար նպաստավոր պայմանների ապահովմանը, համատեղ ծրագրերի</p>

<p>կուսակցություն)</p>	<p>համանախագահության ներքո ընթացող բանակցությունների միջոցով՝ հիմնված ժողովուրդների իրավահավասարության և խաղաղ գոյակցության սկզբունքների վրա: Արցախի ժողովրդի անվտանգությունը զիջման ենթակա չէ:</p> <ul style="list-style-type: none"> • Արցախի Հանրապետությունը պետք է մասնակցի բանակցություններին բոլոր փուլերում: Արցախի Հանրապետությունը չի կարող դուրս մնալ հիմնախնդրի լուծմանն ուղղված բանակցային գործընթացից: Հակամարտության անմիջական կողմերի՝ Ստեփանակերտի և Բաքվի միջև ուղղակի շփումների բացայակության պայմաններում Մինսկի խմբի համանախագահները դիվանագիտական միջոցներով պետք է շարունակեն ապահովել Արցախի Հանրապետության մասնակցությունը հակամարտության կարգավորման գործընթացին: • Հիմնախնդիրը պետք է լուծվի միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա: Մենք գտնում ենք, որ ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության կարգավորման հիմքում դրված ժողովուրդների ազատ ինքնորոշման, պետությունների տարածքային ամբողջականության, ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման միջազգային իրավունքի սկզբունքները բանակցային գործընթացում Արցախի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության անկախացման իրավական հիմքերի և լեգիտիմությանը վերաբերվող առանցքային փաստերի ու փաստաթղթերի հետ լիարժեքորեն կապելու և 	<p>իրականացմանը, ինչպես նաև Արցախ վերադարձող սփյուռքահայերի համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը: Նախաձեռնելու ենք համահայկական եռակողմ գործակցությունը ներկայացնող որևէ ձևաչափով քաղաքական մարմնի (օրինակ՝ Համահայկական Սենատի) ստեղծումը:</p>
------------------------	--	---

		<p>դիվանագիտական խողովակներով ու հասանելի բոլոր միջոցներով դրանք բանակցային խոսույթում ընդգրկելու կարիք կա:</p> <ul style="list-style-type: none">• Ադրբեջանի օկուպացիայի ներքո են Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանը, Մարտակերտի ու Մարտունու շրջանների որոշ հատվածներ: Համաձայն հիմնախնդրի իրավական հիմքերի և Արցախի Հանրապետության սահմանադրության՝ այդ շրջանները պատկանում են Արցախի Հանրապետությանը և պետք է վերադարձվեն:• Արցախի ժողովրդավարական կուսակցությունը հետևողական է լինելու ադրբեջանահայության ցեղասպանության կազմակերպիչներին իրավական պատասխանատվության ենթարկելու և Ադրբեջանի հայ համայնքի քաղաքական ու տնտեսական կորուստների փոխհատուցման հարցերը հակամարտության կարգավորման օրակարգում ընդգրկելու հարցում: <p>Արցախի ժողովրդի անվտանգությունը ենթակա չէ զիջման: Արցախի անվտանգության միակ երաշխավորը շարունակում է մնալ Հայաստանի Հանրապետությունը: Կուսակցությունը աջակցելու է, որ Ստեփանակերտը և Երևանը հետամուտ լինեն ռիսկերի նվազեցման մեխանիզմների ներդրմանը:</p> <p><i>Արտաքին քաղաքականության բնագավառում մենք</i></p>	
--	--	--	--

		<p><i>գերակա ենք համարում Արցախի ժողովրդի ազատ կամարտահայտության արդյունքում ստեղծված անկախ և ինքնիշխան Արցախի Հանրապետության միջազգային իրավական ճանաչումը և միջազգային հանրության հետ ինտեգրումը:</i></p> <ul style="list-style-type: none">• Արցախի Հանրապետության միջազգային իրավական ճանաչման և դիվանագիտական հարաբերությունների հաստատման նպատակով ուղղակի բանակցություններ ենք սկսելու տարբեր երկրների հետ: Նման գործընթաց պետք է սկսել մեր տարածաշրջանում աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական հետաքրքրությունների բախում չունեցող պետություններից:• Համակողմանի քաղաքական կապեր ենք ստեղծելու արտերկրի ժողովրդավարական արժեքներ դավանող և ազգերի ինքնորոշման իրավունքը պաշտպանող կառույցների, կուսակցությունների հետ: Ամրապնդելու ենք կուսակցության կապերը Եվրոպական ազատ դաշինքի հետ և հետևողական ենք լինելու ԵԱԴ-ի միջոցով Եվրախորհրդարանում ու Եվրոպական երկրներում Արցախի Հանրապետության շահերը պաշտպանելու գործում: Նախաձեռնողականություն ենք ցուցաբերելու միջազգային տարբեր կառույցներին ինտեգրվելու ուղղությամբ:• Օգտվելու ենք խորհրդարանական դիվանագիտության ընձեռած հնարավորություններից՝	
--	--	---	--

		<p>արտաքին կապերի ընդլայնումը խթանելու ուղղությամբ՝ սերտորեն համագործակցելով ՀՀ Ազգային ժողովի, Սփյուռքի հայկական կառույցների, դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:</p> <ul style="list-style-type: none"> • Հետամուտ ենք լինելու Հայաստան-Սփյուռք-Արցախի փոխգործակցության համար նպաստավոր պայմանների ապահովմանը, համատեղ ծրագրերի իրականացմանը, ինչպես նաև Արցախի վերադարձող սփյուռքահայերի համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը: Նախաձեռնելու ենք համահայկական եռակողմ գործակցությունը ներկայացնող որևէ ձևաչափով քաղաքական մարմնի (օրինակ՝ Համահայկական Սենատի) ստեղծումը: 	
12.	<p>Իսրայելյան Ռուսլան Էդուարդի («Անկախության Մերունդ» կուսակցություն)</p>	<p>Ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ ես ունեմ հստակ դիրքորոշում, որը բազմիցս առիթ եմ ունեցել հնչեցնել տարբեր հարթակներում:</p> <p>Նախ, որպես Արցախի անկախ քաղաքացի, գտնում եմ, որ Արցախի հարցը չի որոշում մեկ անձ, այլ որոշում է ամբողջ ժողովուրդը: Որպես նախկին զինվորական և ներկայիս քաղաքական գործիչ, մշտապես եղել եմ այն կարծիքին, որ պատերազմի արդյունքում ԱՀ սահմանադրությամբ ամրագրված տարածքները պատկանում են Արցախի ժողովրդին: Այսպիսին է իմ կարծիքը նաև որպես նախագահի թեկնածու, և ժողովրդի քվեն ստանալու արդյունքում, պարզ կդառնա նաև ողջ հասարակության դիրքորոշումը:</p>	<p>Ամրապնդվելու է Հայաստան-Արցախ-Սփյուռք միասնությունը, Սփյուռքի հետ խորացվելու են բազմակողմանի և արդյունավետ կապերը:</p> <p>Իսկ Արցախի խնդրի վերջնական կարգավորումը տեսնում եմ Մայր Հայաստանին միանալու մեջ: Դրան հասնելը ունի երկու ճանապարհ, որոնք կախված են տվյալ փուլում ներկա աշխարհաքաղաքական վիճակից, դրանք են՝ Արցախը Հայաստանին ներկա կարգավիճակով միավորում կամ Արցախի Հանրապետության միջազգային ճանաչում, որից հետո հանրաքվեի միջոցով միացում Մայր Հայաստանին:</p>

		<p>Խնդիրը պետք է կարգավորվի բանակցությունների միջոցով, սակայն բանակցությունները պետք է տարվեն ոչ թե տարածքային փոխզիջումների պայմանով, այլ Ադրբեջանի կողմից ԱՀ սահմանադրությամբ հռչակված ողջ տարածքի վրա ԱՀ անկախությունը ճանաչելու միջոցով:</p> <p>ԱՀ ներկայիս տարածքները դա արդյունքն է պատերազմի, որը սկսել է Ադրբեջանը, և այդ ազատագրված տարածքները պատկանում են Ադրբեջանի կողմից ցեղասպանված և բռնի տեղահանված հարյուր հազարավոր հայերին, որոնք ստիպված են եղել լքել իրենց բնակավայրերը և տեղափոխվել ՀՀ ու ԱՀ:</p> <p>Մարդը ամենամեծ արժեքն է և յուրաքանչյուր տեղահանված հայ իրավունք ունի արժանապատիվ ապրելու ներկայիս ԱՀ տարածքում:</p> <p>Հարկադրված ռազմական ճանապարհով հարցի լուծման դեպքում մենք ստիպված ենք լինելու պատերազմը տեղափոխել հակառակորդի տարածք և այնտեղ պարտադրել կապիտուլյացիա:</p> <p>Իսկ Արցախի խնդրի վերջնական կարգավորումը տեսնում եմ Մայր Հայաստանին միանալու մեջ: Դրան հասնելը ունի երկու ճանապարհ, որոնք կախված են տվյալ փուլում ներկա աշխարհաքաղաքական վիճակից, դրանք են՝</p>	
--	--	--	--

		Արցախը Հայաստանին ներկա կարգավիճակով միավորում կամ Արցախի Հանրապետության միջազգային ճանաչում, որից հետո հանրաքվեի միջոցով միացում Մայր Հայաստանին:	
13.	Դադայան Աշոտ Էդուարդի <i>(ինքնաատաջադրված)</i>	Չկա անդրադարձ	Չկա անդրադարձ
14.	Պողոսյան Մելսիկ Ռաֆայելի <i>(ինքնաատաջադրված)</i>	Չկա անդրադարձ	Արցախի Հանրապետության քաղաքականությունը կառուցվելու է համահունչ Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին քաղաքականության հիման վրա:

2020թ. Մարտի 31-ին կայանալիք Արցախի Հանրապետության Ազգային Ժողովի ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի

նախընտրական ծրագրերը

Քաղաքական ուժ	Հատված նախընտրական ծրագրից՝ վերաբերող Արցախյան հակամարտությանը	Հատված նախընտրական ծրագրից՝ վերաբերող Արցախ-Հայաստան հարաբերություններին
<p>1. «Ազգային վերածնունդ» կուսակցություն</p> <p><i>(Օրագիրը նույնական է նախագահի թեկնածու Հայկ Խանումյանի նախընտրական ծրագրի հետ)</i></p>	<p>«Ազգային վերածնունդ» կուսակցությունը գտնում է, որ Ղարաբաղյան հակամարտության բանակցային լուծումն անհրատեսական է: Հակամարտող կողմերի դիրքորոշումներն այնքան անհամատեղելի են, որ գոյություն ունեցող ստատուս-քվոյի միակ իրական այլընտրանքը նոր պատերազմն է: Այնուամենայնիվ, մեր գլխավոր նպատակներից մեկը պետք է լինի բանակցային լիարժեք ձևաչափի վերականգնումը՝ Արցախի բանակցությունների սեղանի շուրջ վերադառնալու տեսքով: Սա զգալիորեն կբարձրացնի Արցախի սուբյեկտայնությունը և թույլ կտա օգտագործել նաև այս խողովակը մեր ռազմավարական նպատակներին հասնելու համար:</p> <p>«Ազգային վերածնունդ» կուսակցությունը նպատակ է դնելու կանխել հնարավոր պատերազմը բանակի և տնտեսության շարունակական հզորացմամբ: ՀՀ կառավարության հետ համագործակցությամբ ստեղծվելու է ռազմաարդյունաբերական համալիր՝ խթանելով փամփուշտների, արկերի ու հրթիռների արտադրությամբ զբաղվող գործարանների առաջացմանը:</p>	<p>Մենք ջանք չենք խնայելու շարունակել ՀՀ-ի հետ հնտեգրացիայի խորացումը: Արցախը կարող է լինել միայն Հայաստանի Հանրապետության մաս: Որևէ միտք, որը ենթադրում է Արցախի պատկանելիություն կամ մանդատային ենթակայություն այլ երկրի, կամ միջազգային կազմակերպության մեզ համար անընդունելի և դատապարտելի է:</p>

		<p>Մեր առաջնային նպատակներից է լինելու ազատագրված շրջաններում ենթակառուցվածքների վերականգնումը և լայնածավալ վերաբնակեցման ռազմավարության մշակումն ու իրականացումը: Ընտրություններում հաղթելու դեպքում «Ազգային վերածնունդ» կուսակցությունը խորհրդարանական դիվանագիտության միջոցով ակտիվացնելու է Արցախի շահերն արտերկրում ներկայացնելու և պաշտպանելու ջանքերը: Արցախի հետ բարեկամության խորհրդարանական խմբեր ունեցող երկրների թիվը կտրուկ աճելու է:</p> <p>Արցախի ապագան հակամարտության կոնտեքստում մենք տեսնում ենք առվազն ներկայիս տարածքով և շատ ավելի մեծաքանակ բնակչությամբ: «Ազգային վերածնունդ» կուսակցությունն իշխանության գալու դեպքում՝ մեր ազգային շահերին համապատասխանող նոր իրողություններ է ստեղծելու հակամարտության գոտում և ստիպելու է միջազգային հանրությանը համակերպվել այդ իրողությունների հետ:</p>	
2.	<p>«Միասնական հայրենիք» կուսակցություն</p>	<p>Հիմք ընդունելով արցախյան հակամարտության կարգավորման շուրջ ստեղծված իրավիճակը, մասնավորապես բանակցային գործընթացի միակ փաստացի և շոշափելի ձեռքբերումից (1994 թվականի մայիսից անժամկետ զինադադարը, որն արձանագրվել է Կուսակցության նախագահ Սամվել Բաբայանի անմիջական ջանքերով և մասնակցությամբ՝ եռակողմ բանակցությունների արդյունքում) հետո ստեղծված ճգնաժամը՝ «Միասնական հայրենիք» կուսակցությունը</p>	<p>Քաղաքական ուժը հետամուտ է ԱՀ և ՀՀ վարած արտաքին քաղաքականության ներդաշնակեցմանը:</p> <p>Քաղաքական ուժը հետամուտ է ԱՀ երաշխավորված և անվտանգ միջազգային ճանաչմանը՝ վերջնական նպատակ ունենալով</p>

		<p>իրագործելու է երկրի կայուն անվտանգությունն ու զարգացումը երաշխավորող հավասարակշիռ և ճկուն արտաքին քաղաքականություն: Այս համատեքստում մեր երկրի արտաքին քաղաքականության առանցքային խնդիրը լինելու է երկրի անկախության միջազգային ճանաչումը և արցախյան հակամարտության խաղաղ կարգավորումը:</p> <p>Արտաքին քաղաքականության գերխնդիր ունենալով Արցախի անվտանգության ապահովումը, հակառակորդին զսպելու նպատակով ռազմական և ռազմատեխնիկական հավասարակշռության պահպանումը՝ մեր քաղաքական ուժը հետամուտ է՝</p> <ul style="list-style-type: none">• ԱՀ երաշխավորված և անվտանգ միջազգային ճանաչմանը՝ վերջնական նպատակ ունենալով մայր հայրենիքին դեյուրե միավորումը՝ ԱՀ սահմանադրությամբ ամրագրված տարածքների պահպանմամբ,• Արցախի քաղաքական և տնտեսական մեկուսացման հաղթահարմանը, միջազգային և տարածաշրջանային տնտեսական համակարգերում երկրի ներգրավվածության աստիճանի բարձրացմանը,• Արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման բանակցային գործընթացում քաղաքական կամքի դրսևորմանը՝ հանդես գալու արցախահայության ինքնորոշման իրավունքի պաշտպանության դիրքերից:	<p>մայր հայրենիքին դեյուրե միավորումը՝ ԱՀ սահմանադրությամբ ամրագրված տարածքների պահպանմամբ,</p>
--	--	---	---

3.	«Անկախության Մերունդ» կուսակցություն	Չկա անդրադարձ	Չկա անդրադարձ
4.	<p>ՀՅ Դաշնակցություն</p> <p><i>(Ծրագիրը նույնական է նախագահի թեկնածու Դավիթ Իշխանյանի նախընտրական ծրագրի հետ)</i></p>	<p>ԱՀ արտաքին քաղաքականության հիմնական նպատակն Արցախի հիմնահարցի, որպես Հայ Դատի բաղկացուցիչ մասի, լիարժեք լուծումն է խաղաղ ճանապարհով՝ Արցախում անցկացված համաժողովրդական հանրաքվեների և Սահմանադրության հիման վրա, միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում: Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը միացյալ հայրենիք կերտելու միջանկյալ հանգրվան է:</p> <p>«Զարգանալ՝ չզիջելով» սկզբունքը Դաշնակցության համար Արցախի հզորացման և հարցի լուծման հիմնական առանցքն է:</p> <p>Այդ նպատակով անհրաժեշտ է՝</p> <ul style="list-style-type: none"> — պետության նախաձեռնությամբ, համահայկական մակարդակով մշակել և ընդունել Արցախի խնդրի կարգավորման միասնական հայեցակարգ, որտեղ կհստակեցվեն հայկական կողմի հիմնական մոտեցումներն ու տեսլականը, — մշակել և ընդունել արտաքին քաղաքականության հայեցակարգ, — համախմբել հայրենիքի և Սփյուռքի ներուժն Արցախյան հարցի լուծման գործընթացում, -ԱՀ անվտանգության և միջազգային ճանաչման ասպարեզում առավել կենսունակ դարձնել պետության հետ ՀՅԴ Հայ Դատի գրասենյակների և հանձնախմբերի համագործակցությունը, 	<p>Արցախը հայ ժողովրդի միասնության գաղափարական և առարկայական առանցքն է: ԱՀ-ն, ելնելով համայն հայության ամբողջականության գաղափարի գիտակցումից, ազգային շահերը ներկայացնողի իր յուրահատուկ գործոնով կարևոր դերակատարություն ունի հայության համախմբման և հայապահպանման գործում:</p> <p>Արցախ-Հայաստան-Սփյուռք բազմակողմանի կապերի ամրապնդումն ու զարգացումը պետք է հիմնված լինեն փոխշահավետ գործակցության վրա, որ ենթադրում է հետևյալ մոտեցումները՝</p> <ul style="list-style-type: none"> — հայ ժողովրդի տարբեր հատվածների միջև համազգային փոխըմբռնման, փոխվստահության, միասնության և համախմբվածության մթնոլորտի ապահովում, — համահայկական քաղաքական, տնտեսական, մշակութային, կրթական խորհրդածողովների, համաժողովների, հավաքների, ինչպես նաև այլ բնույթի միջոցառումների կազմակերպում ԱՀ-ում, իսկ ՀՀ-ում և արտերկրում անցկացվող նման միջոցառումներին՝ Արցախի մասնակցության ապահովում, — ԱՀ, ՀՀ և Սփյուռքի միջև երկարաժամկետ համագործակցության ծրագրերի մշակում և իրականացում, — համահայկական տեղեկատվական դաշտի

		<p>— բարեկամ երկրների հետ նպատակաուղղված աշխատանքներ ծավալել՝ ընդլայնելով այդ պետություններում ԱՀ դիվանագիտական մարմինների ներկայությունը,</p> <p>— Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ ՀՀ) շարունակի լինել ԱՀ անկախության և անվտանգության երաշխավորը,</p> <p>— ՀՀ և ԱՀ միջև կնքել ռազմաքաղաքական համագործակցության պայմանագիր,</p> <p>— բանակցային գործընթացում ԱՀ-ն պետք է մասնակցի որպես լիիրավ բանակցող կողմ:</p> <p>ԱՀ տարածքային ամբողջականությունը տարածաշրջանի կայունությունն ու խաղաղությունը երաշխավորող հիմնական գործոններից է:</p> <p>ԱՀ իշխանությունները պետք է՝</p> <p>— ամուր կեցվածք ունենան երկրի տարածքային ամբողջականության պահպանման և վերականգնման գործընթացում,</p> <p>— չեզոքացնեն հակաարցախյան քարոզչությունը և միջազգային հանրությանն ընկալելի դարձնեն ԱՀ-ում ընթացող ժողովրդավարական գործընթացները:</p>	<p>ձևավորում և բազմակողմանի համագործակցության ծավալում,</p> <p>— Սփյուռքի ներուժի, այդ թվում՝ գիտական, մասնագիտական և ֆինանսական մասնակցության ապահովում ԱՀ սոցիալ-տնտեսական հիմնահարցերի լուծման գործում:</p>
5.	<p>«Արցախի հեղափոխական կուսակցություն»</p>	<p>Կուսակցությունը չի կիսում այն մոտեցումը, որով դարաբաղյան հիմնախնդիրը քննարկվում է ինքնորոշման շրջանակներում: Ինքնորոշման հարցը որոշվում էր ըստ այդ ժամանակ գործող օրենքների և խաղաղ ժողովրդական ցույցերի միջոցով, ինչը իրականում պատերազմի նախադրյալ չի եղել: Հակամարտությունը սկսվեց Սումգայիթում տեղի</p>	

		<p>ունեցած ջարդերից հետո՝ Ադրբեջանի ԽՍՀ-ի ողջ տարածքում հայերի զանգվածային արքայից ու ոչնչացումից հետո: Լեռնային Ղարաբաղի բնակչությանը այլ տարբերակ չեն թողել, քան զենք վերցնելը՝ ցեղասպանությունից խուսափելու համար: Ցեղասպանություն, որն ունի ավելի քան մեկ դարի պատմություն, որի գոհն են դարձել միլիոնավոր մեր հայրենակիցներ:</p> <p>Կուսակցությունը կարծում է, որ բանակցությունները արդյունք չեն տալիս նաև այն պատճառով, որ ՄԱԿ-ի շրջանակներում միջազգային հանրությանը, ինչպես նաև ԵԱՀԿ Մինսկի խումբին հակամարտության էությունն ու պատճառը ներկայացվում են աղավաղված ձևով: Հենց ցեղասպանությունը պատերազմ հրահրեց, և ոչ այլ ինչը:</p> <p>Պետք է հասկանալ, որ չնայած միջազգային իրավունքը նախատեսում է ինքնորոշման իրավունք, բայց աշխարհի ազդեցիկ երկրները հակված չեն լուծելու դարաբաղյան հիմնահարցն այս շրջանակներում: Քանի որ այդկերպ նրանք նախադեպ կստեղծեն, որը առիթ կդառնա ազգային փոքրամասնությունների համար և կբարձրացնի անկախացման հարցը նույն Ռուսաստանում, ԱՄՆ-ում և եվրոպական մի շարք երկրներում: Այդ պատճառով, Կուսակցության կողմից հակամարտության կարգավորման համար առաջարկվող պլանն ավելի արդյունավետ կլինի:</p> <p>Առաջինը, որովհետև այն համապատասխանում է իրականությանը և բացահայտում է դրա իրական էությունը: Երկրորդն այն է, որ աշխարհում լուրջ</p>	
--	--	---	--

		<p>ազդեցություն ունեցող երկրները չեն բախվում իրենց ազգային փոքրամասնությունների հանդեպ ցեղասպանության խնդրին: Եվ ցեղասպանության համատեքստում դարաբաղյան հիմնահարցը քննարկելը բացում է աշխարհի առաջատար երկրների ձեռքերը, և հայ ժողովրդի համար ընդունելի լուծումը հակասության մեջ չի մտնում հզոր տերությունների շահերին:</p> <p>Պետք է նշել, որ Կուսակցությունը կտրականապես դեմ է «մադրիդյան սկզբունքներին» և ցանկացած շրջանի հանձնմանը: Նախ, հայ ժողովուրդը ոչ միայն բարոյական իրավունք, այլև պարտավորություն ունի Աստծո կողմից իրեն տրված հողերը վերահսկելու: Երկրորդ, Արցախը չի հրաժարվի ցեղասպանությունից տուժած հայերին հայրենիք վերադարձնելու ծրագրերից, և, բնական է, որ բնակեցման համար անհրաժեշտ կլինեն տարածքներ:</p> <p>Լեռնային Ղարաբաղն իրավունք ունի վերահսկել իր ներկայիս տարածքը նաև միջազգային օրենքներից և նորմերից ելնելով: Կուսակցությունն արդյունավետ է համարում նաև միջազգային հանրության շրջանում ռազմական գործողությունների ընթացքում կորցրած նախկին ԼՂԻՄ Շահումյան շրջանի և Մարտակերտի շրջանի մի շարք գյուղերի վերադարձի հարցը բարձրացնելը: Եվ եթե այս հարցը իրականությունից հեռու է թվում, և հաջող արդյունքի հավանականությունը շատ փոքր է, առավել ևս, պետք է պահանջներ ներկայացնեք և ադմուկ բարձրացնեք: Սա քաղաքականություն է:</p> <p>Կուսակցությունը կարևոր է համարում բանակցային</p>	
--	--	--	--

		<p>գործընթացը և փորձերը՝ խաղաղ քաղաքական ճանապարհով լուծելու հարցը: Բայց միաժամանակ հասկանում է, որ բանակցությունների հաջողությունը ուղղակիորեն կապված է բանակի հզորության հետ: ԼՂՀ Պաշտպանության Բանակը ժողովրդի անվտանգության և երկրի տարածքային ամբողջականության միակ հուսալի երաշխավորն է:</p>	
6.	<p>«Ազատ հայրենիք-ՔԴՄ» դաշինք</p> <p><i>(Օրագիրը նույնական է նախագահի թեկնածու Արայիկ Հարությունյանի նախընտրական ծրագրի հետ)</i></p>	<p>Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման գործընթացի ակտիվացում:</p> <p>Ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության խաղաղ և վերջնական կարգավորում, որը պետք է բխի Արցախի ժողովրդի անօտարելի իրավունքների և անվտանգության շահերից:</p> <p>Միջազգային սուբյեկտայնության աստիճանի բարձրացում, տարբեր երկրներում բարեկամական շրջանակների ձևավերում, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ակտիվացում, ցայսօր ձեռքբերված միջազգային կապերի ամրապնդում և գործնականացում:</p>	<p>Մայր Հայրենիքի և Սփյուռքի հետ նոր որակի հարաբերությունների կառուցում:</p>
7.	<p>Արցախի «Արդարություն» կուսակցություն</p>	<p>Արցախի Հանրապետության ռազմական անվտանգության բարձրացման, սպառնալիքների կանխարգելման և չեզոքացման նպատակով «Արդարությունը»-ը առանձնապես կարևորում է.</p> <p>• Զինված ուժերի նկատմամբ արդյունավետ հասարակական վերահսկողությունը,</p>	<p>«Արդարություն» կուսակցությունը նախանշել և իրականացնելու է հավասարակշռված, հայամետ արտաքին քաղաքականություն՝ ուղղված միասնական Հայաստանի կերտմանը:</p> <p>Արցախի համար Հայաստանն ու Սփյուռքը պետք է դառնան հայկական պետականությունը որպես</p>

		<ul style="list-style-type: none"> • ռազմական ծախսերի արդյունավետության ապահովումը, • զինված ուժերում օրենքի գերակայության և բարեվարքության ապահովումը, • ժողովրդագրական անվտանգության ապահովումը: • Հավատարիմ մնալ ազգակերտման և պետականաշինության նվիրական գործին, անմնացորդ նվիրումով ծառայել արցախյան շարժումը տրամաբանական ավարտին հասցնելու սրբազան գործին: 	<p>միասնական առանցք ունեցող ցանցային ամբողջական համակարգ:</p> <p>Ներդրումների իրականացման և ապահովման ուղղությամբ Հայաստանի և սփյուռքի հետ համակողմանի և հետևողական աշխատանքի իրականացում:</p>
<p>8.</p>	<p>Արցախի Ժողովրդավարական կուսակցություն</p> <p>(Օրագիրը նույնական է նախագահի թեկնածու Աշոտ Ղուլյանի նախընտրական ծրագրի հետ)</p>	<p><i>Աղբյուրներն առաջադրված հակամարտության կարգավորումը հնարավոր է բացառապես միջազգային միջնորդության մանդատ ունեցող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ներքո ընթացող բանակցությունների միջոցով՝ հիմնված ժողովուրդների իրավահավասարության և խաղաղ գոյակցության սկզբունքների վրա: Արցախի ժողովրդի անվտանգությունը զիջման ենթակա չէ:</i></p> <ul style="list-style-type: none"> • Արցախի Հանրապետությունը պետք է մասնակցի բանակցություններին բոլոր փուլերում: Արցախի Հանրապետությունը չի կարող դուրս մնալ հիմնախնդրի լուծմանն ուղղված բանակցային գործընթացից: Հակամարտության անմիջական կողմերի՝ Ստեփանակերտի և Բաքվի միջև ուղղակի 	<p>Հետամուտ ենք լինելու Հայաստան-Սփյուռք-Արցախ փոխգործակցության համար նպաստավոր պայմանների ապահովմանը, համատեղ ծրագրերի իրականացմանը, ինչպես նաև Արցախ վերադարձող սփյուռքահայերի համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը: Նախաձեռնելու ենք համահայկական եռակողմ գործակցությունը ներկայացնող որևէ ձևաչափով քաղաքական մարմնի (օրինակ՝ Համահայկական Սենատի) ստեղծումը:</p>

		<p>շփումների բացայակության պայմաններում Մինսկի խմբի համանախագահները դիվանագիտական միջոցներով պետք է շարունակեն ապահովել Արցախի Հանրապետության մասնակցությունը հակամարտության կարգավորման գործընթացին:</p> <ul style="list-style-type: none">• Հիմնախնդիրը պետք է լուծվի միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա: Մենք գտնում ենք, որ ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության կարգավորման հիմքում դրված ժողովուրդների ազատ ինքնորոշման, պետությունների տարածքային ամբողջականության, ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման միջազգային իրավունքի սկզբունքները բանակցային գործընթացում Արցախի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության անկախացման իրավական հիմքերի և լեգիտիմությանը վերաբերվող առանցքային փաստերի ու փաստաթղթերի հետ լիարժեքորեն կապելու և դիվանագիտական խողովակներով ու հասանելի բոլոր միջոցներով դրանք բանակցային խոսույթում ընդգրկելու կարիք կա:• Ադրբեջանի օկուպացիայի ներքո են Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանը, Մարտակերտի ու Մարտունու շրջանների որոշ հատվածներ: Համաձայն հիմնախնդրի իրավական հիմքերի և Արցախի Հանրապետության սահմանադրության՝ այդ շրջանները պատկանում են Արցախի Հանրապետությանը և պետք է վերադարձվեն:	
--	--	---	--

		<ul style="list-style-type: none">• Արցախի ժողովրդավարական կուսակցությունը հետևողական է լինելու ադրբեջանահայության ցեղասպանության կազմակերպիչներին իրավական պատասխանատվության ենթարկելու և Ադրբեջանի հայ համայնքի քաղաքական ու տնտեսական կորուստների փոխհատուցման հարցերը հակամարտության կարգավորման օրակարգում ընդգրկելու հարցում: <p>Արցախի ժողովրդի անվտանգությունը ենթակա չէ զիջման: Արցախի անվտանգության միակ երաշխավորը շարունակում է մնալ Հայաստանի Հանրապետությունը: Կուսակցությունը աջակցելու է, որ Ստեփանակերտը և Երևանը հետամուտ լինեն ռիսկերի նվազեցման մեխանիզմների ներդրմանը:</p> <p><i>Արտաքին քաղաքականության բնագավառում մենք գերակա ենք համարում Արցախի ժողովրդի ազատ կամարտահայտության արդյունքում ստեղծված անկախ և ինքնիշխան Արցախի Հանրապետության միջազգային իրավական ճանաչումը և միջազգային հանրության հետ ինտեգրումը:</i></p> <ul style="list-style-type: none">• Արցախի Հանրապետության միջազգային իրավական ճանաչման և դիվանագիտական հարաբերությունների հաստատման նպատակով ուղղակի բանակցություններ ենք սկսելու տարբեր երկրների հետ: Նման գործընթաց պետք է սկսել մեր տարածաշրջանում աշխարհաքաղաքական ու	
--	--	--	--

		<p>աշխարհատնտեսական հետաքրքրությունների բախում չունեցող պետություններից:</p> <ul style="list-style-type: none">• Համակողմանի քաղաքական կապեր ենք ստեղծելու արտերկրի ժողովրդավարական արժեքներ դավանող և ազգերի ինքնորոշման իրավունքը պաշտպանող կառույցների, կուսակցությունների հետ: Ամրապնդելու ենք կուսակցության կապերը Եվրոպական ազատ դաշինքի հետ և հետևողական ենք լինելու ԵԱԴ-ի միջոցով Եվրախորհրդարանում ու Եվրոպական երկրներում Արցախի Հանրապետության շահերը պաշտպանելու գործում: Նախաձեռնողականություն ենք ցուցաբերելու միջազգային տարբեր կառույցներին ինտեգրվելու ուղղությամբ:• Օգտվելու ենք խորհրդարանական դիվանագիտության ընձեռած հնարավորություններից՝ արտաքին կապերի ընդլայնումը խթանելու ուղղությամբ՝ սերտորեն համագործակցելով ՀՀ Ազգային ժողովի, Սփյուռքի հայկական կառույցների, դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:• Հետամուտ ենք լինելու Հայաստան-Սփյուռք-Արցախ փոխգործակցության համար նպաստավոր պայմանների ապահովմանը, համատեղ ծրագրերի իրականացմանը, ինչպես նաև Արցախ վերադարձող սփյուռքահայերի համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը: Նախաձեռնելու ենք համահայկական եռակողմ գործակցությունը ներկայացնող որևէ	
--	--	--	--

		<p>ձևաչափով քաղաքական մարմնի (օրինակ՝ Համահայկական Սենատի) ստեղծումը:</p>	
<p>9.</p>	<p>«Միացյալ Հայաստան» կուսակցություն (Օրագիրը նույնական է նախագահի թեկնածու Վահան Բաղասյանի նախընտրական ծրագրի հետ)</p>	<ul style="list-style-type: none"> • Դադարեցնել կեղծանկախության բեմականացումը և աստիճանաբար վերացնել Հայաստանի Հանրապետությունից ձևական ու ապօրինի անջատվածության բոլոր դրսևորումները: • Անհապաղ վերականգնել արցախաբնակ ՀՀ քաղաքացիների ընտրական, մյուս սահմանադրական իրավունքները և ազատությունները: • Անհապաղ դադարեցնել «երկուպետությունների» մասին տասնամյակների կեղծ քարոզչությունը և վերացնել դրա հետևանքները: • Սահմանադրությունը համապատասխանեցնել Արցախի՝ Հայաստանի հետ վերամիավորման մասին 1989թ. դեկտեմբերի 1-ի պատմական որոշմանը և ՀՀ անկախության հռչակագրին: Մասնավորապես ամրագրել, որ. <ul style="list-style-type: none"> 5. Արցախը յուրահատուկ կառավարման համակարգով օժտված կազմավորում է Հայաստանի Հանրապետության կազմում, իսկ Արցախի բնակիչները օժտված են ՀՀ քաղաքացու բոլոր իրավունքներով: 6. Արցախի տեղական օրենսդիր մարմինը հրաժարվում է «Ազգային ժողով» անունից, 	<p>Միավորում Հայաստանին՝ տես կողքի սյունակում:</p>

		<p>իսկ նրա ընդունած օրենքները չպետք է հակասեն ՀՀ համապետական օրենսդրությանը:</p> <p>7. Արցախի գործադիր ղեկավարին առաջադրում է ՀՀ նախագահը կամ վարչապետը և ներկայացնում է Արցախի խորհրդարանի հաստատմանը:</p> <p>8. Արցախին երկամբողջ տարածքը Հայաստանի Հանրապետության տարածքի բաղկացուցիչ մասն է, որը կարող է ավելացվել հայկական այլ շրջանների ազատագրման դեպքում:</p> <p>Վերացնել Արցախում Հայաստանին զուգահեռ գործող կարգավորող բոլոր հանձնաժողովների առանձին գործունեությունը՝ դրանց իրավասությունները փոխանցելով ՀՀ համապետական մարմիններին, մասնավորապես և առաջնահերթորեն հասնել Արցախի հեռախոսային ցանցի ներառմանը համահայաստանյան ցանցում և բացառել ռոումինգի կիրառությունը Հայաստանի հատվածների միջև:</p>	
10.	<p>«Արցախի պահպանողական» կուսակցություն</p>	<p>Անկախ, ազգային պետությունը մեր ժողովրդի ամենամեծ նվաճումն է, որը որևէ շահարկման և սակարկության առարկա չի կարող լինել:</p> <p>Չկա վերադարձ անցյալին՝ լինի դա կարգավիճակի, թե սահմանների առումով: Կարգավիճակի միակ</p>	<p>Մեր բոլոր հաղթանակների հիմքում ընկած է Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը և պետք է անել հնարավորը շարունակական ընդլայնման և ամրապնդման համար:</p>

		<p>փոփոխությունը կարող է լինել հետագայում միացյալ հայոց պետության անբաժան մաս կազմելը:</p>	
<p>11.</p>	<p>Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցություն</p>	<p>Կոմկուսը գտնում է, որ արտաքին քաղաքականության հիմքում պետք է ընկած լինի Լեռնային Ղարաբաղի փաստացի անկախության միջազգային ճանաչումը, բարեպատեհ ժամանակներում մայր Հայաստանին մաս կազմելու հեռանկարով:</p> <p>Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը պետք է լուծվի ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում, միայն քաղաքական բանակցությունների միջոցով, հիմք ընդունելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի սկզբունքը: Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին որևէ համաձայնագիր չի կարող ընդունվել առանց բանակցություններում դարաբաղյան կողմի մասնակցության:</p> <p>Վնասակար և անընդունելի համարել ապրիլյան քառօրյա պատերազմից հետո շրջանառվող <տարածք՝ կարգավիճակի>, <տարածք՝ խաղաղության> դիմաց սկզբունքները և Ցանկացած պատճառաբանությամբ ԼՂՀ գործող սահմանադրությամբ ամրագրված ու բանակի կողմից վերահսկվող տարածքի զիջումը պետք է դիտարկել դավաճանություն և ծանր հանցագործություն արցախահայության շահերին, զոհված հերոս տղաների թափած արյանը: Նպաստել ԼՂՀ ինքնապաշտպանական համակարգի կատարելագործմանը և հզորացմանը, բնակչության անվտանգության ապահովմանը, տարածաշրջանում</p>	<p>Կոմկուսը գտնում է, որ արտաքին քաղաքականության հիմքում պետք է ընկած լինի Լեռնային Ղարաբաղի փաստացի անկախության միջազգային ճանաչումը, բարեպատեհ ժամանակներում մայր Հայաստանին մաս կազմելու հեռանկարով:</p>

		<p>կայունության և տնական խաղաղության ամրապնդմանը, որի գլխավոր երաշխիքը ԼՂՀ Պաշտպանության բանակն է: Մենք բոլոր ջանքերը գործադրելու ենք բանակի հզորությունն ամրապնդելու, բանակում բարոյահոգեբանական մթնոլորտը բարելավելու, ժողովրդի մեջ բանակի նկատմամբ առանձնահատուկ հոգածության և հպարտության զգացում դաստիարակելու համար: Առաջարկել և օրենսդրորեն ամրագրել երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստության համալիր ծրագիր:</p>	
12.	<p>«Նոր Արցախ» կուսակցությունների դաշինք</p>	<p>Ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման շուրջ մեր դիրքորոշումը խարսխված է ԱՀ նախագահի թեկնածու Մասիս Մայիլյանի նախընտրական ծրագրի համապատասխան դրույթներին, որոնց էությունը հետևյալն է.</p> <ul style="list-style-type: none"> • Արցախի անվտանգությունը երաշխավորող ներկայիս մեր ունեցած կոմպաններն անձեռնմխելի են և ենթակա չեն սակարկության: Դրանք կարող են փոխարինվել կամ լրացվել ավելի մեծ երաշխիքներով: • Ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության կարգավորումն ինքնին պետք է հիմնված լինի Արցախի ժողովրդի հայտարարված իրավունքների իրացման փաստի ճանաչման վրա: 	<p>Արցախը միացյալ հայրենիքի մի մասն է իր բոլոր դրսևորումներով: Պետք է շարունակել բոլոր այն աշխատանքները, որոնք ուղղված են երկու պետությունների միատարրության գաղափարի ամրապնդմանը: Պետք է մշակվեն ծրագրեր եւ ծավալվի երկխոսության լայն օրակարգ՝ հաղթահարելու բոլոր մակարդակներով եղած անհամապատասխանությունները:</p> <p>Հայկական հողի յուրաքանչյուր թիզ մեր ազգային միասնության վկան է: Հայոց երկրի իրավատերը համայն հայությունն է:</p> <p>Պետք է ՀՀ-ի հետ միասին ներգրավվել միասնական ազգային օրակարգի ձևավորման գործընթացին, որը վեր է բոլոր տեսակի կուսակցականությունից կամ նեղ անձնական շահերից՝ հանուն մեր ազգի եւ</p>

		<ul style="list-style-type: none"> • Անհրաժեշտ է վերականգնել պաշտոնական Ստեփանակերտի ուղղակի և լիիրավ մասնակցությամբ բանակցությունների լիարժեք եռակողմ ձևաչափը: Այս հարցում երկու հայկական պետությունների ղեկավարությունների դիրքորոշումները համընկնում են: Ադրբեջանա-ղարաբադյան հակամարտության երկարաժամկետ կարգավորումն ու կայուն խաղաղության հաստատումը հնարավոր են այն պարագայում, եթե հակամարտության յուրաքանչյուր կողմ դե-յուրե ստանձնի խաղաղության պայմանագրի դրույթների իրականացման համար պատասխանատվության իր բաժինը: Հարկ է նշել, որ կարգավորման գործընթացում միակ շոշափելի ձեռքբերումը՝ 1994 թ. մայիսի 12-ի անժամկետ զինադադարը, հենց եռակողմ բանակցությունների շրջանակներում է արձանագրվել: Պաշտոնական Ստեփանակերտի վերադարձը բանակցային սեղանի շուրջ կարևոր է, այդ թվում՝ Արցախի սուբյեկտայնության բարձրացման առումով: • Մադրիդյան սկզբունքները վաղուց արդեն հնացած են և չեն կարող հիմք ծառայել բանակցային գործընթացի համար: Անհրաժեշտ է մշակել նոր մոտեցումներ և գաղափարներ, ձևավորել նոր օրակարգ: Մասնավորապես, պետք է հասնել «տարածք՝ կարգավիճակի դիմաց» կամ «տարածք՝ խաղաղության դիմաց» բանաձևերի վերանայմանը: Երկու հարցերն էլ կարգավիճակ և խաղաղություն, համարվում են ինքնաբավ, և 	<p>հայրենիքի հզորացման: Հայրենիքը պետք է հանձնառու լինի յուրաքանչյուր հայի ճակատագրի համար, ինչպես եւ յուրաքանչյուր հայ՝ Հայրենիքի ճակատագրի:</p> <p>Սփյուռքի հետ հարաբերություններում գերակշռողը պետք է լինի ոչ միայն և ոչ այնքան ֆինանսական բաղադրիչը, դրամահավաքը, որքան գաղափարահավաքը, սփյուռքյան մտավոր ներուժի ըստ ամենայնի ներգրավումը հայրենիքի անշեղ զարգացման գործում: Իսկ դրա համար ամենաթանկ կապիտալը փոխադարձ վստահությունն է: Արցախի նոր իշխանություններն ամեն ինչ անելու են վստահելի ու հարգված գործընկեր լինելու համար:</p>
--	--	--	--

		<p>չպետք է առաջարկվեն հայկական կողմերին՝ որպէս սակարկության առարկա:</p> <ul style="list-style-type: none">• Բացառել Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դէմ նոր ագրեսիայի սանձազերծումը՝ ապահովելով խաղաղ կարգավորման գործընթացի անշրջելիությունը, այդ թվում՝ շփման գծում հրադադարի ռեժիմի միջազգային վերահսկման մեխանիզմների ներդրման և ԵԱՀԿ Գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակի և դիտարկման կարողությունների ավելացման վերաբերյալ Վիեննայում (2016 թ. մայիսի 16) և Սանկտ Պետերբուրգում (2016 թ. հունիսի 20) ձեռք բերված համաձայնությունների իրագործման միջոցով:• Տարածաշրջանում վերջնական խաղաղության և կայունության հաստատման համար պարտադիր պայման է հակամարտության կողմերի միջև վստահության մթնոլորտի ձևավորումը, ինչն անհրաժեշտ պայմաններ կստեղծի կարգավորման գործընթացի առաջնական համար <p>Բանակցային գործընթացի շրջանակներում Արցախի նոր իշխանությունը սկզբունքորեն պայքարելու է Ադրբեջանի կողմից բռնազավթված տարածքների վերադարձի, Հյուսիսային Արցախի և այլ հայաշատ բնակավայրերի տեղահանված և փախստական հայության տարածքային և գույքային իրավունքների</p>	
--	--	--	--

«Արմէդիա» ՏՎԳ

		համալիր պաշտպանության համար:	
--	--	------------------------------	--